ԳԼՈՒԽ 1

ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ

§ 5. ՌԱՑԻՈՆԱԼ ԹՎԵՐ: ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌԱՑԻՈՆԱԼ ԹՎԵՐԻ ՀԵՏ

1. Սովորական և վերջավոր տասնորդական կոտորակներ

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս է կոչվում.

ա) մետրի մեկ տասներորդ բաժինը,

բ) տոննայի մեկ հազարերորդ բաժինը,

գ) քառակուսի մետրի մեկ տասըհազարերորդ բաժինը,

դ) քառակուսի կիլոմետրի մեկ միլիոներորդ բաժինը,

ե) օրվա մեկ քսանչորսերորդ բաժինը,

զ) դարի մեկ հարյուրերորդ բաժինը,

է) ամբողջ մեծության մեկ հարյուրերորդ մասը:

2. Գրառել սովորական կոտորակի տեսքով.

ա) երկու երրորդ, բ) երեք քառորդ, գ) կես, դ) տասնյոթ հարյուրերորդ, ե) քսաներեք չորրորդ, զ) քառասուն հինգերորդ, է) յոթ:

3. Քանի՞ ժամ է.

ա) օրվա մեկ չորրորդը, բ) շաբաթվա տասնչորսերորդը, գ) կես օրվա երեք չորրորդը, դ) շաբաթվա մեկ երեսունհինգերորդը,

ե) տասնհինգ րոպեն, զ) երեք հարյուր վաթսուն վայրկյանը:

4. Քանի՞ կիլոգրամ է.

ա) տոննայի մեկ քսանհինգերորդը, բ) քառորդ տոննայի երկու

հինգերորդը, գ) ցենտների յոթ քսանհինգերորդը, դ) երկու հարյուր գրամը:

5. Քանի՞ մետր է. ա) երեք քառասուներորդ կիլոմետրը, բ) կես կիլոմետրի քսանհինգերորդ մասը, գ) մեկ դեցիմետրը, դ) մեկ կիլոմետրը:

6. Ո՞ր մասն է կազմում. ա) 1 դմ-ը՝ 3 մ-ի, բ) 1 սմ^2-ն՝ 1 մ^2-ի, գ) 1 դմ^3-ը՝ 1 մ^3-ի, դ) 1 հա-ը՝ 1 կմ^2-ի, ե) 1 լիտրը՝ 1 մ^3-ի, զ) 1 սմ^3-ը՝ 1 լիտրի:

7. Վանդակները լրացնել թվերով.

ա) 1սմ = ☐ մ, բ) 1մ = ☐ կմ,

գ) 1մ^2 = ☐ կմ^2, դ) 1մ^2 = ☐ հա,

ե) 1րոպե = ☐ ժամ, զ) 1ժամ = ☐ օր,

է) 10կգ = ☐ գ, ը) 300կգ = ☐ տ:

Վարժություններում որոշի՛ր, թե որ կոտորակն է մեծ (8-16).

8. $\frac{1}{2}$ և $\frac{1}{3}$: **9.** $\frac{1}{3}$ և $\frac{2}{3}$: **10.** $\frac{3}{4}$ և $\frac{5}{8}$:

11. $\frac{7}{11}$ և $\frac{8}{11}$: **12.** $\frac{3}{4}$ և $\frac{4}{5}$: **13.** $\frac{9}{100}$ և $\frac{1}{10}$:

14. $\frac{5}{11}$ և $\frac{7}{10}$: **15.** $\frac{3}{5}$ և $\frac{12}{20}$: **16.** $\frac{13}{11}$ և $\frac{17}{16}$

Համեմատեք թվերը (17-20).

17. $\frac{4}{5}$ և 0,79: **18.** $\frac{5}{4}$ և 1,2:

19. 0,95 և $\frac{19}{20}$: **20.** 0,875 և $\frac{8}{9}$:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. գ) Քառակուսի սանտիմետր, զ) տարի, է) տոկոս: **3.** գ) 9, ե) $\frac{1}{4}$, զ) $\frac{1}{10}$, **4.** գ) 28, դ) 0,2; **5.** բ) 20, դ) 0,001; **6.** բ) $\frac{1}{1000}$, գ) $\frac{1}{1000}$, դ) $\frac{1}{100}$, ե) $\frac{1}{1000}$, զ) $\frac{1}{1000}$; **13.** Երկրորդը: **14.** Երկրորդը: **15.** Հավասար են: **16.** Առաջինը: **18.** $\frac{5}{4} > 1,2$: **20.** $0,875 < \frac{8}{9}$: